

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հիմնադրամ

Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների,  
նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն



ԵՊՀ ԳՐԱԴԱՐԱՆ-ՈՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,  
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Կատարող՝ ԳՈՒԳԽՆՏՏԿ-ի տնօրեն

Թերեզա Խաչատրյան

Փյունի – 2020

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ .....	5
ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ .....	6
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ.....	8
ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ .....	11
ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.....	15
ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԸ.....	18
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ .....	19
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ .....	25

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՇՊՀ» հիմնադրամի (այսուհետ՝ **համալսարան**) «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) գործառույթներն ավելին են, քան դասական գրադարաններինը՝ պայմանավորված Կենտրոնի առաքելությամբ ու նպատակներով:

2017-2018 ուստարվանից սկսած՝ Կենտրոնում մշակվել ու ներդրվել են մի շարք հիմնարար փաստաթղթեր (գրադարանային արձանագրություն, ակտի ձևեր, տարաբնույթ մատյաններ և այլն)՝ առաջնորդվելով համապատասխան իրավական փաստաթղթերով, Հայաստանի առաջադեմ գրադարանային փորձով: Հարկ է նշել, որ 2017-2018 ուստարվա ավարտին ամփոփվել են «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» գույքի գույքագրման, հաշվառման և գնահատման աշխատանքների արդյունքները՝ սկսված 03.11.2017թ.: Այդ արդյունքները հիմնարար են՝ 2018-2019 ուստարում գրադարանային մի շարք աշխատանքներ իրականացնելու հարցում:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի գրադարանը համալրվել է 1825 միավոր նոր գրքով, 997 միավոր պարբերական հրատարակությամբ (թերթեր, ամսագրեր և այլն) և այլն:

2017-2018 ուստարվանից սկսած՝ համալսարանի ներքին շահակիցների՝ ընթերցանության հանդեպ հետաքրքրության բարձրացման նպատակով կազմակերպվել են գրքերի, հեքիաթների քննարկումներ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է հինգ գրքի ու հինգ հեքիաթի քննարկում:

2018-2019 ուստարում Կենտրոնը համակարգել է ակադեմիական խորհրդատվությունների անցկացումը՝ սովորողների ուսումնառության արդյունավետության բարձրացման և աշխատաշուկայում մրցունակության բարձրացման աջակցման նպատակով՝ համապատասխան մասնագիտական ու ընդհանրական գիտելիքների փոխանցման, կարողությունների ու հմտությունների (այդ թվում՝ վերաբերող SS ոլորտին) ձևավորման միջոցով:

Համալսարանի, քոլեջի և ավագ դպրոցի գործունեությանն աջակցող համակարգչային ու ցանցային սարքավորումների տեխնիկական սպասարկումը, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ու աջակցումն իրականացվել և իրականացվում է Կենտրոնի տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների գործունեության շնորհիվ:

## ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ



Կենտրոնի առաքելությունը համալսարանում համապատասխան կրթական միջավայրի ապահովումն է և օգտվողին միտված որակյալ ծառայությունների մատուցումը, որոնք բարձրացնում են կրթության, հետազոտության որակը, բաց տեղեկատվական-կրթական տարածությունում համալսարանի կորպորատիվ հեղինակությունը և աջակցում մարզի բնակիչների մարդկային ռեսուրսների պահանջվածության բարձրացմանն ու հաջողակ լինելու գիտակցության ապահովմանը:

Կենտրոնի գործունեության հիմնական նպատակը համալսարանի ներքին շահակիցների տեղեկատվական պահանջմունքների, գրադարանային-տեղեկատվական ռեսուրսների, ստեղծարար ու նորարարական մեթոդների միջոցով ուսումնական գործընթացի ու գիտական հետազոտությունների որակյալ աջակցումն է:

Նպատակին համապատասխան Կենտրոնը կոչված է լուծելու մի շարք խնդիրներ (տե՛ս Կենտրոնի կանոնադրություն՝ հաստատված համալսարանի գիտական խորհրդի 26.12.2019 թ. նիստի № 8/4 որոշմամբ), որոնց կարգավորումը, լուծումը պահանջում է ինչպես համալսարանի ներքին շահակիցների (կառուցվածքային ստորաբաժանումներ, առանձին աշխատողներ, ուսանողներ և այլն), այնպես էլ արտաքին շահակիցների (գրադարաններ, ՀԿ-ներ և այլն) հետ անընդհատ, կառուցողական փոխազդեցություններ՝ արժևորելով հետադարձ կապի դերը:

## ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Կենտրոնի կառավարումն իրականացնում է Կենտրոնի տնօրենը, որն անմիջականորեն ենթարկվում է համալսարանի ռեկտորին: Դրված խնդիրների իրագործման նպատակով Կենտրոնի գործառույթները բաշխվում են համապատասխան պատասխանատուների միջև, որոնց գործառույթները շարադրված են Կենտրոնի կանոնադրությունում:

2018-2019 ուստարվա ավարտին Կենտրոնի աշխատողների թիվը եղել է **ինը** (այդ թվում՝ Կենտրոնի տնօրենը), որից 5-ը զբաղվել են գրադարանային գործունեությամբ, 2-ը՝ ՏՏ ոլորտին վերաբերող աշխատանքներով, իսկ 1-ը՝ ակադեմիական խորհրդատվությունների գործընթացի համակարգմամբ:

Գրադարանային գործունեությամբ զբաղվում է ընդամենը 5 աշխատող (**5 դրույք**), որից 1-ը պատասխանատու է ընթերցարանի գործունեության ծավալման համար, 2-ը զբաղված են փաստաթղթերի համալրման ու մշակման հարցերով, իսկ գրականության սպասարկման հարցում պատասխանատու է ընդամենը 2 աշխատող, որից մեկը զբաղվում է նաև տեղեկատվական-մատենագիտական սպասարկման հարցերով: Հարկ է նշել, որ մինչ բուհի կազմակերպական կառուցվածքի փոփոխումը (19.04.17 N3/1 որոշմամբ) և հաստիքացուցակի վերանայումը, միայն «Գիտական գրադարանին» հատկացված է եղել **12 դրույք**:

ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման նպատակով նախատեսված վերջին քայլը՝ 33.4-ը, վերաբերում է գրադարանի աշխատողների վերապատրաստմանը:

Տեղին է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում բուհական գրադարանային գործունեությանը վերաբերող վերապատրաստումները գրեթե բացակայում են, և այդ հանգամանքը արհեստական արգելք է աշխատողների մասնագիտական վերապատրաստումներն իրագործելու հարցում: Այնուամենայնիվ, սկսած 2017 թ.-ից՝ Կենտրոնի աշխատողները մասնակցում են վերապատրաստումների: Կենտրոնի աշխատողներից մեկը մասնակցել է Միչիգանի համալսարանի կողմից անցկացվող առցանց «Public Library Marketing and Public Relations» (23.07.17-24.08.18) դասընթացին և քննությունները հանձնելուց հետո ստացել վկայական: Առցանց դասընթացի ընթացքում ստացված գիտելիքները փոխանցվել են գործընկերներին: 2018-2019 հաշվետու

Ժամանակահատվածում Շիրակի մարզային գրադարանում մասնագիտական տարբերակված վերապատրաստում են անցել գրադարանային գործով զբաղվող բոլոր աշխատողները:

Ներկայումս կա Կենտրոնի աշխատողների համար այլ բուհեր ճանաչողական այցերի կազմակերպման անհրաժեշտություն՝ բուհական գրադարանների փորձին ծանոթանալու համար:

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Կենտրոնի գրքաֆոնդը կազմված է եղել **63346** միավոր գրականությունից, որից՝ **60367** միավոր գիրք, **2058** միավոր պարբերական հրատարակություն ու **921** միավոր ատենախոսության սեղմագիր:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի գրադարանային պաշարներում համալարված գրքերի պատկերն այսպիսին է՝

Անուն՝ 1027

Միավոր՝ 1825

Նվիրատվության կարգով ստացվել է՝

Անուն՝ 1021

Միավոր՝ 1809

Աղյուսակ 4.1 Համալսարանի գրադարանային ֆոնդի համալրումը գրքերով

Հ.հ.	Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում	Համալսարանի գրադարանային պաշարները համալրած գրքերի քանակական բաշխվածությունը		Նվիրատվության կարգով ստացված գրքերի քանակական բաշխվածությունը	
		Անուն	Միավոր	Անուն	Միավոր
1.	Կենտրոն	1019	1817	1015	1803
2.	Ռեկտոր	2	2	2	2
3.	Ֆինանսատնտեսագիտական	2	2		



	վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժին				
4.	Պատմության և փիլիսոփայության ամբիոն	2	2	2	2
5.	Անգլերեն լեզվի և գրականության ամբիոն	2	2	2	2
	Ընդամենը՝	1027	1825	1021	1809

Ինչպես երևում է աղյուսակային տվյալներից, գրադարանային ֆոնդի համալրումը հաշվետու ժամանակահատվածում գլխավորապես կատարվել է նվիրատվությունների շնորհիվ: Այստեղ հիշարժան է Երևանի պետական համալսարանի հրատարակչության կողմից վերջին հինգ տարիներին հրատարակած, գիտության տարբեր բնագավառներին վերաբերող 548 միավոր գրականության նվիրաբերումը (որից 340 միավորը՝ գիրք, իսկ 208-ը՝ պարբերական հրատարակություն)՝ 831.021 ՀՀ դրամ արժողությամբ:

Ինչ վերաբերում է պարբերական հրատարակություններին, հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի գրքաֆոնդը համալրվել է **997 միավոր գրականությամբ**, որից **971 միավոր հայալեզու** պարբերական հրատարակություն և **26 միավոր ռուսերեն** պարբերական հրատարակություն: Հաշվետու ժամանակահատվածում ձեռքբերված պարբերական հրատարակությունների ընդհանուր արժեքը կազմում է 914.769 դրամ 3956 լումա:

Ստացված պարբերական հրատարակությունների վերաբերյալ տեղեկատվությունը ամրագրվում է գրադարանային փաստաթղթի գրանցման քարտերի վրա: Սկսած 2017-2018 ուստարվանից՝ պարբերական հրատարակություններն այլևս չեն գրանցվում գրադարանային գլխավոր մատյանում:

Համալսարանում ձևավորված մշակույթի համաձայն՝ պարբերական հրատարակությունները ոչ թե մնում են Կենտրոնում, այլ տրամադրվում են ամբիոններ՝ օգտվողների համար հասանելիության ապահովման համար: Պարբերական հրատարակությունների կորստի երևույթները կարգավորելու համար 2017-2018 ուստարում ստեղծվել ու ներդրվել է «Պարբերական հրատարակությունների ընդունման-հանձնման գործընթացի իրականացման» մատյան: Մատյանի կառուցվածքի տրամաբանության համաձայն՝ ոչ միայն ամրագրվում է պարբերական հրատարակությունը կառուցվածքային ստորաբաժանմանը հանձնելու, այլև՝ Կենտրոնին ետ վերադարձնելու ամսաթիվը: 1 ուսումնական տարի օգտագործելուց հետո 2019-2020 ուստարվա սկզբին պարբերական հրատարակությունների մեծ մասը վերադարձվել է Կենտրոն և տեղադրվել ընթերցարանի տարածքում:

Իհարկե, համալսարանի տպագիր գրականության թիվը տարեցտարի ավելացել է, սակայն այս ցուցանիշի բարելավման ուղղությամբ, վստահաբար, կան լուրջ անելիքներ: Հատկապես մտահոգիչ է առկա գրականության պատկերը նոր մասնագիտությունների կտրվածքով: Այստեղ ինչ որ չափով կարգավորող դերակատարում ունեն գրադարանի էլեկտրոնային ռեսուրսները ([library.shsu.am](http://library.shsu.am)):

Լուծման կարիք ունեցող խնդիրներից է գրապահոցները օգտվողների համար հասանելի դարձնելը, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող ունենա հնարավորություն ինքը որոնի գիրքը և գտնի այն համապատասխան տարածքում՝ գրադարանավարների ուղղորդմամբ: Հաշվետու ժամանակահատվածում էլեկտրոնային նամակ-խնդրանքով Կենտրոնի տնօրենը դիմել է ՀՀ-ում գործող խոշոր կազմակերպություններին, բայց պատասխան՝ մերժման ձևով, ստացվել է ընդամենը երկու կազմակերպությունից: Դիմումը վերաբերում էր գրադարանային պահարանների և գրքերի թվայնացման սարքի ձեռքբերման համար ֆինանսական աջակցության ցուցաբերմանը:

## ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Կենտրոնի գրադարանային ծառայություններից համալսարանի ներքին շահակիցների՝ աշխատողների և ուսանողների օգտվելու քանակական ցուցանիշները հաշվետվու ժամանակահատվածում այսպիսին են՝

Կենտրոնից օգտվողների փաստացի հաճախումների քանակը կազմում է 11528 (այդ թվում՝ ընթերցարանից օգտվողների փաստացի հաճախումների թիվը կազմում է 7040), որից ուսանողների հաճախումների քանակը կազմում է 10466 (այդ թվում՝ ընթերցարանում ուսանողների հաճախումների քանակը կազմում է 6436) (բակալավրիատի առկա ուսուցման համակարգի ուսանողների հաճախումների քանակը կազմում է 7897, բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների հաճախումների քանակը՝ 1101, մագիստրատուրայի ուսանողների հաճախումների քանակը՝ 1440 և ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում սովորող ուսանողների հաճախումների քանակը՝ 28), իսկ համալսարանի աշխատողների հաճախումների քանակը՝ 1062:

Կենտրոնի գրքատացքը կազմում է 2838 (այդ թվում՝ Կենտրոնի ընթերցարանի գրքատացքը կազմում է 537), որից ուսանողների կողմից ձևավորված գրքատացքը կազմում է 2455 (բակալավրիատի առկա ուսուցման համակարգի ուսանողների կողմից ձևավորված գրքատացքը 1850, բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների կողմից ձևավորված գրքատացքը՝ 321, մագիստրատուրայի ուսանողների կողմից ձևավորված գրքատացքը՝ 269 և ասպիրանտուրայում և հայցորդության համակարգում սովորողների կողմից ձևավորված գրքատացքը՝ 15), իսկ աշխատողների գրքատացքը՝ 383:

Վերոնշյալ թվերը համեմատենք 2017-2018 ուստարվա տվյալների հետ:

**Աղյուսակ 5.1 Կենտրոնից օգտվողների փաստացի հաճախումների քանակը 2017-2018 և 2018-2019 ուստարիներին՝ ըստ օգտվողների վիճակագրական կատեգորիաների**

Հ.հ.	2017-2018 ուստարի		2018-2019 ուստարի	
	Ուսանողների	Աշխատողների	Ուսանողների	Աշխատողների
1.	10242	824	10466	1062
	Ընդամենը՝ 11066		Ընդամենը՝ 11528	

**Աղյուսակ 5.2 Կենտրոնի գրքատացքը 2017-2018 և 2018-2019 ուստարիներին՝ ըստ օգտվողների վիճակագրական կատեգորիաների**

Հ.հ.	2017-2018 ուստարի		2018-2019 ուստարի	
	Ուսանողների	Աշխատողների	Ուսանողների	Աշխատողների
1.	2828	226	2455	383
	Ընդամենը՝ 3054		Ընդամենը՝ 2838	

Ընդհանրացնելով՝ 2018-2019 ուստարում հաճախումների պատկերը դրական է՝ 2017-2018 ուստարվա համեմատ (+462), մինչդեռ գրքատացքը՝ բացասական (-216):

Մասնավորապես, ֆակուլտետների և առանձին ռազմական ամբիոնի ընթերցողների (ուսանողների և աշխատողների)՝ Կենտրոնից օգտվելու ցուցանիշները երևում են ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 5.3 2018-2019 ուստարում ֆակուլտետների և առանձին ռազմական ամբիոնի ընթերցողների՝ Կենտրոնից օգտվելու ցուցանիշները**

Հ.հ.	Ֆակուլտետ, ամբիոն	Ընթերցողների փաստացի հաճախումների քանակ		Գրքատաք	
		Ուսանողներ	Աշխատողներ	Ուսանողներ	Աշխատողներ
1.	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ	2110	105	388	40
2.	Մանկավարժության ֆակուլտետ	1449	71	356	6
3.	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ	1958	231	402	48
4.	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ	4843	332	1279	128
5.	Ռազմական ամբիոն	106	0	30	0
<b>Ընդամենը՝</b>		<b>10466</b>	<b>739</b>	<b>2455</b>	<b>222</b>

Պետք է նշել, որ ընթերցարանից օգտվողների սպասարկման վերաբերյալ ելակետային տեղեկատվությունը, բացի գրանցամատյանից, սկսած 2017-2018 ուստարվանից, ամրագրվում է էլեկտրոնային բազայում:

ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման նպատակով նախատեսված քայլերից 33.3-ում նշված է նորագույն տեխնոլոգիաների կիրառման մասին՝ գրադարանային ծառայության արդյունավետության բարձրացման նպատակով, էլեկտրոնային քարտարանների ներդրման վերաբերյալ: Այս կետի իրագործումը ենթադրում է համապատասխան գրադարանային ծրագրի ներդրում, էլեկտրոնային տվյալների շտեմարանի

ստեղծում, ինչը կապված է ֆինանսական խնդիրների կարգավորման հետ: Ներկայումս Կենտրոնում սպասարկման վերաբերյալ տվյալները գրանցվում են օգտվողների համապատասխան քարտերում, իսկ ընթերցարանում՝ գրանցամատյաններում:

Պետք է նշել, որ 2017-2018 ուստարում կատարվել է օգտվողների քարտերի համար նախատեսված արկղերի և քարտերի բաժանարարների ամբողջական փոխարինում նորերով:

## ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպված միջոցառումները՝ մասնավորաբար գրքերի քննարկումները, երևում են shsu.am կայքի Կենտրոնի կայքէջի «Միջոցառումներ» բաժնում <http://shsu.am/entertainments-library/>, որտեղ պոստենցիալ մասնակցի համար ստեղծված է վաղօրոք գրանցվելու հնարավորություն:

Գրքերի քննարկումների կազմակերպման գլխավոր նպատակը գրքի ընթերցանության հանդեպ հետաքրքրության բարձրացումն է և, իհարկե, համալսարանի ներքին շահակիցների ակտիվացումը՝ նախաձեռնողականության ցուցաբերման միջոցով:

Վերոնշյալ բաժնում և ստորև բերված աղյուսակում ներկայացված 6 միջոցառումից 5-ը գրքի քննարկում է:

### Աղյուսակ 6.1 2018-2019 ուստարում անցկացված միջոցառումների ցուցակ

Հ.հ.	Գրքի հեղինակ	Միջոցառման անվանում	Բանախոս	Միջոցառման անցկացման ամսաթիվ
1.	Կիզի Կ.	«Թռիչք կկվի բնի վրայով» գրքի և Միլոշ Ֆորմանի համանուն ֆիլմի ներկայացում-քննարկում	Գառնիկ Մարգարյան, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի «Կինոյի և հեռուստատեսության» ամբիոնի վարիչ, կինոռեժիսոր	12.11.18

2.	<p>Օրուել Ջ., «1984»  Օրուել Ջ., «Անասնաֆերմա»  Քիզ Դ., «Ծաղիկներ  Էլջերնոնի համար»,  Բրեդբրի Ռ., «Մարսյան  քրոնիկոն»,  Բրեդբրի Ռ., «451  աստիճան ըստ  Ֆարենհայթի»,  Ուելս Հ., «Ժամանակի  մեքենա»  Հերբերտ Ֆ. «Դյունա»,  Վեոն Ժ., «Ուղևորություն  դեպի երկրի կենտրոնը»  Ադամս Դ.,  «Գալակտիկայում  ավտոստոպով»,  Գերլոն Դ.,  «Օտարականը»</p>	<p>Գիտաֆանտաստի  կայի ժանրի  գրքերից  մեջբերումների  ընթերցում և  խմբային  քննարկում</p>	<p>Թերեզա Խաչատրյան, «Կենտրոնի» տնօրեն  (կազմակերպիչ)</p>	12.04.19
----	--	--	---	----------



3.	Շաֆակ Է.	«Ստամբուլի ընկեցիկը» վեպի քննարկում	Մարտ Գրականագետ, թարգմանչուհի	Մադոյան-Ալաջաջյան	18.05.19
----	----------	-------------------------------------	-------------------------------	-------------------	----------

Կենտրոնում ուսանողների առաջարկությամբ և անմիջական մասնակցությամբ ստեղծվել է «Հեքիաթասեր» վերլուծական ակումբը: 2018-2019 ուստարում կազմակերպվել է 5 հեքիաթի քննարկում:

Գիտաֆանտաստիկայի ժանրի գրքերի վերաբերյալ միջոցառման անցկացման շնորհիվ Կենտրոնը Երևանի ամերիկյան անկյունից, որպես նվեր, ստացել է Ռեյ Բրեդբերրիի «Մարքսյան Քրոնիկոն» գրքի երկու օրինակ: Նախքան միջոցառմանը մասնակցելը Կենտրոնի պաշտոնական էլեկտրոնային հասցեն ընդգրկվել է հայ գրադարանավարների ԱԼԻՍ էլեկտրոնային նամակացանկում, ինչը թույլ է տալիս տեղեկանալու նոր միջոցառումների մասին:

### Աղյուսակ 6.2 Հեքիաթասեր վերլուծական ակումբում քննարկված հեքիաթները

Հ/հ	Ամսաթիվ	Հեքիաթի անվանում, հեղինակ
1.	06. 02. 2019	«Քեֆ անողին քեֆ չի պակսիլ», Հովհաննես Թումանյան
2.	13. 02. 2019	«Աստղամանուկը», Արթուր Կարապետյան (ուսանող)
3.	22. 02. 2019	«Տերն ու Ծառան», Հովհաննես Թումանյան
4.	25. 03. 2019	«Լուցկիներով աղջիկը», Հանս Քրիստիան Անդերսեն
5.	06. 05. 2019	«Բարի հարսը», Չինական ժողովրդական հեքիաթ

Կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ հայտարարությունները տարածվել են էլեկտրոնային ու սպազիր տարբերակներով:

## ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷԶԸ

ԳՊՄԻ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման փորձագիտական վերջնական զեկույցում նշված թերությունների վերացման նպատակով նախատեսված քայլերից է էլեկտրոնային «գիտական գրադարանի» շահագործումը (33.1): Էլեկտրոնային «գիտական գրադարանը» շահագործված է եղել բուհի նախկին պաշտոնական կայքէջում՝ «gspi.am»-ում: Համալսարանի նոր պաշտոնական կայքի՝ «shsu.am»-ի ստեղծումից հետո էլեկտրոնային «գիտական գրադարանի» էջի՝ «library.gspi.am»-ի պահպանումն ու տեղեկատվության տեղափոխումը բավականին խնդրահարույց էր: 2018-2019 ուստարում խնդիրը կարգավորվել է և հնարավոր է դարձել բարելավման աշխատանքների շարունակումը:

2017-2018 ուստարում «shsu.am»-ի ստեղծումից հետո տրամադրվել է **Կենտրոնի կայքէջի** պատրաստման բովանդակային նոր կառուցվածքը և առանձին կառուցվածքային միավորների բովանդակությունը (բացի էլեկտրոնային «Գիտական գրադարանի» հատվածից):

Էլեկտրոնային «գիտական գրադարանի»՝ «library.shsu.am»-ի «Բաժիններ» հատվածի էլեկտրոնային գրքերի ընտրությունը կատարվել է համալսարանի ամբիոնների և Կենտրոնի աշխատողների կողմից: Ներկայումս այնտեղ տեղադրված է 517 էլեկտրոնային գիրք:

Էլեկտրոնային «գիտական գրադարանի» «Բաժիններ» ու «Օգտակար հղումներ» բաժինները վերանայվել են:

Հաշվի առնելով երիտասարդների և ոչ միայն երիտասարդների ակտիվ ներառվածությունը սոցիալական տարաբնույթ ցանցերում՝ ծառայող որպես տեղեկատվության ստացման, սեփական կարծիքների արտահայտման հարթակ, 2017-2018 ուստարում ստեղծվել է Կենտրոնի ֆեյբուքյան պաշտոնական էջը, որի վիրտուալ ընկերների թիվը 2018-2019 ուստարվա ավարտին եղել է 693: Կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումների գերակա մասը լուսաբանվել է սոցիալական ցանցի միջոցով:

## ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Գիտական խորհրդի 25.09.2018 թ. նիստի № 2/1 որոշմամբ՝ վերաբերող «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում ակադեմիական խորհրդատվությունների կառավարման» աշխատակարգի հաստատմանը, 2018-2019 ուստարում ՇՊՀ-ի ուսանողների համար մատուցվել են ակադեմիական խորհրդատվություններ: Վերոնշյալ աշխատակարգը մշակվել է համալսարանի ««Ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի» քաղաքականության և ընթացակարգերի ուղեցույցի» նախագծի հիման վրա, որը ևս մշակվել էր Կենտրոնի տնօրենի կողմից: Ակադեմիական խորհրդատվությունների ձևերը հաշվի են առնում բուհական միջավայրում, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջված գիտելիքներն ու կարողությունները, ապահովում ուսանողների համար այլընտրանքային կրթական միջավայր, դրական կերպով շահադրդում դասավանդողներին՝ կիրառելու ու զարգացնելու սեփական մասնագիտական ներուժը՝ հանուն համալսարանի զարգացման:

Ակադեմիական խորհրդատվությունների ծառայությունների մատուցման համար 2017 թ. վերանորոգվել է «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնի տարածքում գտնվող առանձին սենյակը (39մ<sup>2</sup>), որը կարիք ունի կահավորման: Հիմնանորոգման ու կահավորման կարիք ունի ևս մեկ ֆիզիկական տարածք (76.5), որը ևս նախատեսված է ակադեմիական խորհրդատվությունների անցկացման համար:

Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններ նախատեսված են համալսարանի բակալավրիատի ու մագիստրատուրայի բոլոր մասնագիտությունների գծով ուսանողների համար, ովքեր գրում են կուրսային և/կամ ավարտական աշխատանք: Աշխատակարգում սահմանված ժամանակահատվածներում կատարվել են իրազեկման պահանջված աշխատանքները (տեղեկատվական հանդիպումներ ուսանողների հետ, հայտարարություններ՝ փակցված հայտարարությունների տախտակներին և այլն): ՇՊՀ-ի ֆակուլտետներում և առանձին «Ռազմական» ամբիոնի համար անցկացվել է 8 գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություն՝ ապահովելով թվով 339 գրանցված ուսանողից փաստացի 160 ուսանողի մասնակցությունը:

Աղյուսակ 8.1 2018-2019 ուստարում գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններին գրանցված և փաստացի մասնակցած ուսանողների ցուցանիշներ (բակլավրիատ (առկա, հեռակա), մագիստրատուրա)

Ֆակուլտետ	Բակլավրիատ առկա		Բակլավրիատ հեռակա		Մագիստրատուրա		Ընդհանուր գումարային գրանցված ուսանողների	Ընդհանուր գումարային փաստացի մասնակցած
	գրանց. ուսանող. քանակ	փաստացի մասնակցած ուսանող.	գրանց. ուսանող. քանակ	փաստացի մասնակցած ուսանող.	գրանց. ուսանող. քանակ	փաստացի մասնակցած ուսանող.		
Բնագիտամաթեմ ատիկական ֆակուլտետ	41	25	23	4	14	6	78	35
Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ	27	17	27	10	5	3	59	30
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ	71	32	15	2	11	6	97	40


Մանկավարժության ֆակուլտետ	25	16	22	3	21	6	68	25
Ռազմական ամբիոն	21	16	10	10	6	4	37	30
<b>Ընդհանուր՝</b>	<b>185</b>	<b>106</b>	<b>97</b>	<b>29</b>	<b>57</b>	<b>25</b>	<b>339</b>	<b>160</b>

Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվություններին գրանցված, բայց չմասնակցած ուսանողների բացակայությունները պայմանավորված են նշանակված գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների օրերի՝ պրակտիկայի անցկացման և ազատ օրերի, ինչպես նաև լսարանային դասաժամերի հետ նշանակված ժամի համընկնումներով:

2018թ.-ին Կենտրոնի տնօրենի և խորհրդատվությունների համակարգողի համատեղ աշխատանքի շնորհիվ պատրաստվել է գիտական աշխատանքներում գրականության ցանկի ձևավորման և հղումների կատարման ուղեցույց (<http://shsu.am/wp-content/uploads/2019/11/Ուղեցույց-ուսանողների-համար-2017-2018-ուստարի.pdf>), որն ուղարկվել է ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեներին և բաժանվել տպագիր տարբերակով:

Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվության նշված ձևի որակի գնահատման նպատակով՝ Կենտրոնի կողմից խորհրդատվությունների կազմակերպման կեսից իրականացվել է ընթացիկ աշխատանքների գնահատում՝ մշակված գործիքների օգնությամբ: Արդյունքները կներկայացվեն ըստ ֆակուլտետների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդատվության այս ձևի պարագայում որոշիչ է ակադեմիական խորհրդատուի աշխատանքի որակը:

**Գծապատկեր 8.1 2018-2019 ուստարում անցկացված գիտահետազոտական գրագիտության խորհրդատվության արդյունավետությունը (ըստ ուսանողների քանակի)**



Ստացվում է, որ հարցման մասնակիցներն արդյունավետ են համարել գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունները: Այդ մասին են փաստում նաև ստուգիչ հարցի արդյունքները, որոնց փաստաթղթային հիմքերն առկա են կենտրոնում:

Հարցաթերթիկում ներառված վերջին բաց հարցին՝ «Ունե՞ք հավելյալ գաղափարներ, թե ինչպե՞ս կարող ենք բարելավել գիտահետազոտական գրագիտության խորհրդատվության որակը» տրվել են հետևյալ պատասխանները.

**Աղյուսակ 8.2 2018-2019 ուստարում անցկացված գիտահետազոտական գրագիտության խորհրդատվության որակի բարելավման հավելյալ առաջարկներ**

Հ.հ.	Համախմբված որակական առաջարկություններ՝ ըստ հաճախականության
1.	հավելյալ խորհրդատվությունների կազմակերպում (12)
2.	խորհրդատվության արդյունավետ, մատչելի մատուցում (3)
3.	խորհրդատվության անցկացում մագիստրոսական թեզը գրել սկսելուց առաջ (2)
4.	նոր տեխնիկական գիտելիքների իմացություն (1)
5.	աշխատանքի կատարման ընթացքում, խնդիրների բախվելիս, խորհրդատվությունների անցկացում (1)
6.	այլոց մասնակցության խթանում՝ առավել տեղեկացված լինելու և աշխատանքը հեշտ գրելու համար (1)
7.	որևէ գիտահետազոտական աշխատանքի նմուշ օրինակի ցուցադրում (1)
8.	յուրաքանչյուր կուրսի հետ առանձին խորհրդատվության անցկացում և անկացում՝ մագիստրոսական թեզը գրել սկսելիս (1)
9.	հավելյալ գաղափարների բացակայություն (1)

Վերոգրյալ առաջարկները, ինչպես նաև 2019-2020 ուստարում «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնի կողմից կազմակերպվող «Գիտահետազոտական գրագիտության» խորհրդատվությունների ակադեմիական խորհրդատուների բաց մրցույթի անցկացման հանձնաժողովի 30.10.2019թ. թիվ 1 նիստի արձանագրությունը փաստաթղթային հիմքեր են՝ աշխատակարգի բարելավման ուղղությամբ առարկայական աշխատանքներ կատարելու համար:

Համակարգային (ընդհանրական) կոմպետենցիաների վրա հիմնված խորհրդատվություն-դասախոսությունների (այդ թվում՝ համապատասխան SS-համակարգի թեմաների) գերակա մասի անցկացումից հետո համալսարանի 4 միջմասնագիտական

ուսանողական թիմերը մշակել են իրենց ստեղծագործ գաղափար-առաջարկները՝ վերածելով տեսական գիտելիքը գործնական, շոշափելի արդյունքի:

Գաղափար-առաջարկներն են (<http://shsu.am/ակադեմիական-խորհրդատվությունների-ար/>)՝

- Բուհական զբոսաշրջություն,
- «Ժամանակի կառավարումը ուսանողների համար» վերտառությամբ առցանց դասընթաց (ռուսերենով),
- 85-ամյա համալսարանին նվիրված օրացույց,
- «Հեքիաթասեր» վերլուծական ակումբ:

Հետազոտական խորհրդատվությունը խթանում է միևնույն մասնագիտության գծով բարձր ու ցածր կուրսերի ուսանողների միջև մասնագիտական փորձի փոխանակումը, նոր կարողությունների ու հմտությունների ձևավորումը: Նախորդ ուստարում այս գործընթացին ներառվել է 8 ակադեմիական խորհրդատու-ուսանող: Նշված խորհրդատվությունների մասնակիցների թիվը կազմել է 208:

Խորհրդատվության միակ ձևը, որն առայժմ չի գործում համալսարանում, վճարովի հիմունքներով կազմակերպվող կրթական ծրագրերի մասնագիտական առարկաների առանձին թեմաների արտածրագրային խորհրդատվություններն են:



## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. shsu.am կայքի թարմացումներ, լրացումներ, նոր նյութերի տեղադրում ու բաժինների փոփոխություններ,
2. Համալսարանի 12 աշխատակցի համար shsu.am ընդլայնումով էլեկտրոնային հասցեի տրամադրում և սպասարկում,
3. Համակարգչային լսարանների թվով 18 համակարգչի վիճակի գնահատում, մաքրման և յուղման աշխատանքներ,
4. Համակարգչային լսարանների և ընթերցարանի թվով 20 համակարգչի սպասարկում՝ ծրագրային ապահովման թարմացումներ, կիրառական ծրագրային փաթեթների տեղադրում, փոփոխում,
5. Վարչական և ֆակուլտետային ենթակառուցվածքների 6 համակարգիչների սպասարկում, օպերացիոն համակարգերի և կիրառական ծրագրային փաթեթների տեղադրում, թարմացում, փոփոխություններ,
6. 4 կաբինետում ցանցային միացումներ, ցանցային և համացանցային կարգավորումներ, առկա և նոր ցանցային սարքավորումների միացում և կարգավորում,
7. Քոլեջի թվով 10, իսկ արվեստի ամբիոնի 10 համակարգիչների սպասարկում՝ ծրագրային ապահովման թարմացումներ, կիրառական ծրագրային փաթեթների տեղադրում, փոփոխում,
8. Յուրաքանչյուր օր սերվերի սպասարկման ընթացիկ աշխատանքների կատարում,
9. 4-ժամյա տևողությամբ խորհրդատվություն-դասախոսությունների իրականացում՝ համակարգային կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված թիմերի աշխատանքների բնույթին համապատասխան,
10. Շուրջ 60 միջոցառումների տեխնիկական սպասարկում՝ ընթացող համալսարանի դահլիճում և ֆակուլտետներում (պրոյեկտորների, էկրանների և դյուրակիր համակարգիչների տրամադրում, տեղադրում, կարգավորում):